Կ.ն.ն 3-Ա/2, 16.09

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 403
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «09» 2019 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և **«Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Սահակյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2019 թվականին սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 4-ը «Աբելյանական 3-րդ հանրապետական թատերական փառատոն» ծրագրի կազմակերպման և անցկացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (հավելված N1) և մասնակի ծախսերի նախահաշվի (հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թ. սեպտեմբերի 16-ի N 658-Ա/2 հրամանի՝ հինք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Թատերարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունը՝ հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Արվեստների ծրագրի» «Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Թատերական ստեղծագործական ծրագրեր և նախագծեր» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետում սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունը, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով ծրագրի, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի և Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկույթ աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը՝ կցելով էլեկտրոնային կրիչներ՝ ասուլիսների և մամուլի հրապարակումների մասին, լուսանկար, ազդագիր, բուկլետ, հրավիրատոմս և այլ տեղեկատվական նյութեր:

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ միջոցառման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամփոփ տեղեկույթ՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.9. Մինչև գովազդային և այլ նյութերի տպագրումը Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել դրանց նմուշները:

2.3.10. Մինչև 2019 թ. սեպտեմբերի 20-ը Պատվիրատուին ներկայացնել Աբելյանական 3-րդ հանրապետական թատերական փառատոնի ծրագրում ընդգրկված ստեղծագործությունների և մասնակից թատերախմբերի, հյուրերի վերաբերյալ հստակ տեղեկատվություն:

2.3.11. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված ծրագրի միջոցառումներից ստացված եկամուտների և դրա հաշվին իրականացված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

2.4. *Կատարողը իրավունք ունի՝*

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 1563.6 հազար (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն հավելվածի:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է իր գանձապետական հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1.-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 /հինգ հարյուրերորդական/ %-ի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում վերջինս Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 /հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թ. հոկտեմբերի 5-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2019 թվականի նոյեմբերի 5-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թ. նոյեմբերի 15-ը:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 10 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն	Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Վանաձոր, Թատերական 3-ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313	Հ/Հ 900018002122
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 06905154
Գլխավոր քարտուղար՝	Հեռ.՝ /0322/ 4-47-73
_____ Ն. Հարությունյան	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝
Կ.Տ.	_____ Լ. Սահակյան
	Կ. Տ.

Հավելված N 1
23 09 2019 թ.
N403 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Աբելյանական 3-րդ հանրապետական փառատոն

1	Կազմակերպության անվանում	«Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թատերական 3ա
3	Ծրագրի անվանում	Աբելյանական 3-րդ հանրապետական փառատոն
3.1	Բովանդակություն	Նվիրված է Հովի. Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Աբելյանական 3-րդ հանրապետական փառատոնի շրջանակում Վանաձորի Հովհաննես /Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմում Թումանյանի և այլ հեղինակների ստեղծագործությունների նորովի ընթերցումներով հանդես կգան հետևյալ թատրոնները. 1. **Սեպտեմբերի 20, ժամը՝ 19:00** - Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն, Հովի. Թումանյան, «Անուշ», բեմադրությունը՝ Վահե Շահվերդյանի 2. **Սեպտեմբերի 24, ժամը՝ 16:00** – Հրազդանի դրամատիկական թատրոն, ճապոնական ժողովրդական հեքիաթ՝ «Փոքրիկ ձկնորսը», բեմադրությունը՝ Աշոտ Սարգսյանի 3. **Սեպտեմբերի 25, ժամը՝ 18:00** – Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն, Ալ. Շիրվանզադե, «Մորգանի խնամին», բեմադրությունը՝ Երվանդ Ղազանչյանի 4. **Սեպտեմբերի 26, ժամը՝ 18:00** – Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոն, Արմենուհի Սիսյան, «Ագռավն ասաց», բեմադրությունը՝ Արմեն Բայանդուրյանի 5. **Սեպտեմբերի 29, ժամը՝ 16:00** - Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն, Հովի. Թումանյան, «Շունն ու կատուն», բեմադրությունը Վիգեն Ստեփանյանի 6. **Հոկտեմբերի 3, ժամը՝ 18:00** – Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն, Ու. Շեքսպիր, «Ռոմեո և Ջուլիետ», բեմադրությունը՝ Կարեն Ներսիսյանի 7. **Հոկտեմբերի 4, ժամը՝ 18:00** - Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն, Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», բեմադրությունը՝ Վահե Շահվերդյանի, մոնոներկայացումը՝ Հակոբ Ազիզյանի
3.2	Նպատակ	Ստեղծել թատերական տոն, միավորել թատրոնները միասնական փառատոնի շուրջ, ներկայացնել հանրությանը Թումանյանի ստեղծագործությունների մոտիվներով

		բեմադրություններ՝ նոր և նորովի լուծումներով ու մոտեցումներով, ամրապնդել թատրոնների միջև ստեղծագործական շփումները, հաղորդակից դառնալ հանրապետության այլ թատրոնների ձեռքբերումներին: Մենք կարևորում ենք փոխայցելությունները, արդյունավետ համագործակցությունը: Արդյունքում ակնկալում ենք փորձի փոխանակում, դերասանների աշխարհայացքի ընդլայնում, հաստատված և ամրապնդվող բարեկամական, գործընկերային, հեռանկարային կապեր: Փառատոնի նպատակն է ինչպես թումանյանական, այնպես էլ այլ հեղինակների գործերի բարձրարժեք ներկայացումը թատերարվեստի երկրպագուներին: Գաղտնիք չէ որ համաշխարհայնացման և արդիականացման գործընթացներն ավելի ու ավելի են արագացնում ավանդական և ազգային շատ արժեքներ կիրառությունից դուրս մղելու գործընթացը: Հետևաբար՝ անհրաժեշտ է արագ և համարժեք արձագանքել մեր շուրջը կատարվող փոփոխություններին: Մշակույթի ոլորտում նույնպես պետք է արդիականացվեն գիտելիքի ու տեղեկատվության ձևավորման և փոխանակման համակարգերը: Ազգային, ավանդական մշակութային շատ երևույթներ փառատոնի շրջանակում թատերասերներին կմատուցվեն առավել նոր, դինամիկ և հագեցած, որի արդյունքում մենք կունենանք ոչ նյութական մշակութային ավանդական արժեքների նորովի մատուցում:
3.3	Անցկացման ժամկետ	Սեպտեմբերի 20-հոկտեմբերի 5, 2019թ.
3.4	Անցկացման վայր	Վանաձորի Հովհ. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն
3.5	Ակնկալվող արդյունքներ	**Հիմնական արդյունքը՝ թատերական տոն Լոռիում** Աբեյանական փառատոնն արդեն իսկ ավանդական է դարձել և միավորում է բազմաթիվ թատերասերների՝ նպաստելով թատերական կյանքի աշխուժացմանը մարզում, հանդիսատեսի գեղագիտական ճաշակի զարգացմանը՝ նորովի մատուցելով բազմաթիվ ստեղծագործություններ: Այս փառատոնը բացահայտումների, ստեղծագործական հայտնությունների, վերանայումների և ձեռքբերումների ազդակ է յուրաքանչյուրի համար: Ակնկալվում է բազմաժանր և հետաքրքիր ներկայացումների շարք, փոխշահավետ համագործակցություն հայաստանյան և մերձավոր սփյուռքի թատրոնների միջև: Իսկ մշակութային իրողությունների ապակենտրոնացումը, կարծում ենք, կնպաստի մշակութային կյանքի համաչափ զարգացմանը հանրապետությունում: Ծրագրի համար թիրախային խմբեր և շահառուներ են հանդիսանալ բոլորը՝ ՀՀ և ոչ ՀՀ բոլոր քաղաքացիները, ովքեր ունեն մշակութային կրթություն ստանալու ցանկություն: Քանի որ փառատոնը կայանալու է սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 4-ը, և քանի որ փառատոնային ներկայացումները

		հիմնականում Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների թեմաներով ու մոտիվներով են, ուստի և՝ հիմնական սպառողը կարող են լինել դպրոցականները՝ ելնելով ծրագրային կրթական-մշակութային բաղադրիչից: Մենք ապահովում ենք ծրագրի մատչելիություն հավասարաչափ բոլորի համար, իսկ ազդեցության չափելիությունը կդրսևորվի իբրև վարքագծային և արժեհամակարգի դրական փոփոխությունների հանրագումար:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Փառատոնի շրջանակում կսպասարկվի **2500** հանդիսատես, դահլիճը կունենա 100 տոկոս ծանրաբեռնվածություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
Վանաձոր, Թատերական 3-ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002122
ՀՎՀՀ 06905154
Հեռ.՝ /0322/ 4-47-73
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

_____ Լ. Սահակյան

Կ. Տ.

Հավելված N 2
23 09 2019 թ.
N403 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Աբելյանական 3-րդ հանրապետական թատերական փառատոնի կազմակերպման և անցկացման *մասնակի* ծախսերի

(2019 թ. սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 4-ը)

Հ/Հ	Ծախսերի և մասնակից թատրոնի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն**	**316.0**
1.1.	Տրանսպորտի վարձակալություն՝ *Երևան-Վանաձոր-Երևան* բեռնատար մեքենա՝ 75.0 հազ.դրամ մարդատար մեքենա՝ 130.0 հազ.դրամ	205.0
1.2.	Օրապահիկ՝ 37 մարդ x 3000 դրամ= 111.0 հազ. դրամ	111.0
2.	**Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոն**	**275.0**
2.1.	Տրանսպորտի վարձակալություն՝ *Երևան-Վանաձոր-Երևան՝* բեռնատար մեքենա՝ 90.0 հազ.դրամ մարդատար մեքենա՝ 95.0 հազ.դրամ	185.0
2.2.	Օրապահիկ՝ 30 մարդ x 3000 դրամ = 90.0 հազ. դրամ	90.0
3.	**Հրազդանի դրամատիկական թատրոն**	***34.0***
3.1.	Տրանսպորտի վարձակալություն՝ *Հրազդան-Վանաձոր-Հրազդան* մարդատար մեքենա՝ 25.0 հազ.դդրան	25.0
3.2.	Օրապահիկ՝ 3 մարդ x3000 դրամ= 9.0 հազ. դրամ	9.0
4.	**Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն**	**204.0**
4.1.	Տրանսպորտի վարձակալություն՝ *Երևան-Վանաձոր-Երևան* բեռնատար մեքենա՝ 90.0 հազ.դրամ մարդատար մեքենա՝ 60.0 հազ.դրամ	150.0
4.2.	Օրապահիկ՝ 18 մարդ x3000 դրամ = 54.0 հազ. դրամ	54.0
5.	**Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոն**	**192.0**
5.1.	Տրանսպորտի վարձակալություն՝ *Թբիլիսի – Վանաձոր-Թբիլիսի* մարդատար մեքենա՝ 120.0 հազ.դրամ	120.0
5.2.	Սննդի հետ կապված ծախսեր՝ 9 մարդ x 8 000 դրամ= 72.0 հազ. դրամ	72.0

6.	**Երևանի մնջախաղի պետական թատրոն**	84.0
6.1.	Տրանսպորտի վարձակալություն՝ *Երևան-Վանաձոր-Երևան* մարդատար մեքենա՝ 60.0 հազ.դրամ	60.0
6.2.	Օրապահիկ՝ 8 մարդ x 3000 դրամ = 24.0 հազ. դրամ	24.0
7.	**Տպագրական ծախսեր** բուկլետ (8 էջ, չափը՝ 15 x 15 սմ) 990 օրինակ x 200 դրամ = 198.0 հազ. դրամ	**198.0**
	Ընդամենը	**1303.0**
8.	ԱԱՀ	**260.6**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1563.6**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Վանաձորի Հ. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
Վանաձոր, Թատերական 3-ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002122
ՀՎՀՀ 06905154
Հեռ.՝ /0322/ 4-47-73
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

_____ Լ. Սահակյան

Կ. Տ.